ԲՅՈՒԼԵՏԵՆ

Դեկտեմբեր 2025թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Դեկտեմբերին գումարվել է Պալատի խորհրդի 4 նիստ՝ **02.12.2025թ.-ին, 16.12.2025թ.-ին, 23.12.2025թ.-ին և 30.12.2025թ.-ին**:

02.12.2025թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 4 հարց: Նիստի ընթացքում հաստատվեցին Պալատի փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի անդամ կազմակերպության նկատմամբ ԿՊՄ կիրառելու և օրակարգային այլ հարցերի մասին որոշումները:

16.12.2025թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 5 հարց: Նիստի ընթացքում հաստատվեցին Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձին Պալատի անդամ ընդունելու, Պալատին անդամակցելու համար դիմած կազմակերպությանը Պալատի անդամ ընդունելու, Պալատի 2025թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող կազմակերպությունը հաստատելու, Պալատի 2026թ. գործունեության տարեկան ծրագիրը հաստատելու, Պալատի 2026թ. արտաքին գնահատման կազմակերպությունների ցանկը և ժամանակացույցը հաստատելու մասին որոշումները:

23.12.2025թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 2 հարց: Նիստի ընթացքում հաստատվեցին Պալատի ֆիզիկական անձ անդամի անդամակցությունը օրենքի ուժով դադարեցնելու, Պալատի անդամ «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ նկատմամբ ԿՊՄ չկիրառելու, Պալատի անդամ «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ նկատմամբ ԿՊՄ կիրառելու մասին որոշումները:

30.15.2025թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 2 հարց: Նիստի ընթացքում հաստատվեցին Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու և Պալատի ֆիզիկական անձ անդամի անդամակցությունը օրենքի ուժով դադարեցնելու մասին որոշումները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 1 նիստ՝ **24.12.2025թ.**-ին, որում փորձագետ հաշվապահի որակավորում է շնորհվել 2 (երկու) անձի և հավանություն է տրվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ **12.12.2025թ.-ին և 28.12.2025թ.-ին**, որոնցում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին՝ հաստատելու 6(վեց) ֆիզիկական անձանց և մեկ կազմակերպության անդամակցությունը Պալատին:

Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 1 (մեկ) նիստ՝ **21.12.2025թ.-ին**, որում քննարկել է «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու և «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ նկատմամբ ԿՊՄ չկիրառելու հարցերը:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

10.12.2025թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Աշխատանքային օրենսգրքի ամենակիրառելի կարգավորումները, հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ժորա Սարգսյանը:**



12.12.2025թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Տրանսֆերային գնագոյացում» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Նաիրուհի Ավետիսյանը:**

18.12.2025թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Աուդիտի որակի կառավարում» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Էմիլ Վասիլյանը:**

19.12.2025թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Որակի վերահսկմանն առնչվող խնդիրների քննարկում» թեմայով: Քննարկումն անցկացնում էր **Դավիթ Եդիգարյանը:**

24.12.2025թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Ավելացված արժեքի հարկ, հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ասանեթ Ալոյանը:**



26.12.2025թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«ԱՄՍ 240 – Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում խարդախության հետ կապված աուդիտորի պատասխանատվությունը» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Մարինա Ենգիբարյանը:**



Հանդիպում ԵՊՀ ուսանողների հետ: Աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման հավաստագրերի շնորհում

Ս.թ. դեկտեմբերի 1-ին Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատում տեղի ունեցավ Պալատի նախագահ Մանվել Ղազարյանի և գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանի հանդիպումը Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի տարբեր կուրսերի մոտ 40 ուսանողների, աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման վկայագրերի շնորհման հանդիսավոր միջոցառման մասնակիցների հետ:

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ղեկավարության, ուսանողական գիտական ընկերության աջակցությամբ Պալատի՝ համատեղ ձևաչափով կազմակերպված այս հանդիպումը ուսանողների կրթության և մասնագիտական զարգացման գործընթացի կատարելագործմանն ու առաջընթացին միտված, արդեն ավանդույթի ուժ ստացող հերթական միջոցառումներից մեկն է խնդրի կարևորման և հետևողական իրագործման ճանապարհին:

Բանախոսները ուսանողներին ծանոթացրեցին Պալատի որակավորման համակարգին և կրթական ծրագրին, որակավորում շնորհելու չափանիշներին և պահանջներին, ներկայացրեցին այն ուղին, որն անպակման պետք է անցնել որակավորված մասնագետ դառնալու ճանապարհին, պատասխանեցին նրանց հետաքրքրող հարցերին, որոնց շուրջ ծավալվեց ակտիվ, արդյունավետ քննարկում:
Քննարկմանը հաջորդեց 18 մասնակիցների աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման վկայագրերի շնորհման հանդիսավոր արարողությունը, որին իրենց շնորհավորանքներով միացան նաև ուսանողները՝ հստակ նպատակադրմամբ՝ մոտ ապագայում տոնել նման հաղթանակ:

Հանդիպում ACCA ներկայացուցիչների հետ

Ս.թ. դեկտեմբերի 9-ին Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատում տեղի ունեցավ հանդիպում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (ACCA) ներկայացուցիչների հետ:
Հանդիպմանը մասնակցում էին Պալատի նախագահի տեղակալ, Որակավորման հանձնաժողովի նախագահ Արթուր Հարությունյանը, Պալատի խորհրդի անդամ Թաթուլ Մովսիսյանը, Պալատի գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը, Կենտրոնական Ասիայի, Մոնղոլիայի և Հայաստանի գծով ACCA ղեկավար Ժաննա Իսկենովան, ACCA բիզնեսի զարգացման ղեկավար Բեգայիմ Օրմուշեվան:
Հանդիպման ընթացքում քննարկվեց Պալատի և ACCA միջև համագործակցության ներկա վիճակը, զարգացման հեռանկարները՝ ինչպես կրթության, այնպես էլ ՀՄԴ անդամակցության գործընթացում:

Հանրային վերահսկողության խորհրդի 4-րդ միջազգային ֆորում 2025

Սույն թվականի դեկտեմբերի 9-ից 10-ը Տիրանայում (Ալբանիա) տեղի ունեցավ Հանրային վերահսկողության խորհրդի 4-րդ միջազգային աշխատաժողովը, որին մասնակցում էին Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախագահ Մանվել Ղազարյանը, Հանրային վերահսկողության խորհրդի նախագահի տեղակալ Կարեն Ալավերդյանը, խորհրդի անդամներ Անուշ Գրիգորյանը, Ռաֆֆի Ալեքսանյանը, Ազատ Գաբրիելյանը և ֆինանսների նախարարության ներկայացուցիչ Գոռ Քոչարյանը:

Աշխատաժողովի նպատակն էր պետական վերահսկողության և որակի ապահովման ոլորտում գիտելիքի և միջազգային փորձի փոխանակումը: Ծրագրին մասնակցում էին 11 երկրների՝ Ալբանիայի, Հայաստանի, Ադրբեջանի, Բոսնիա և Հերցեգովինայի, Վրաստանի, Կոսովոյի, Մոլդովայի, Չեռնոգորիայի, Հյուսիսային Մակեդոնիայի, Սերբիայի և Ուկրաինայի ներկայացուցիչներ: Աշխատաժողովի ընթացքում մասնակից երկրները ներկայացրել են զեկույցներ աուդիտի որակի վերահսկողության ոլորտում կիրառվող փորձի և իրականացրած բարեփոխումների արդյունքների վերաբերյալ:

ՀԱԵԽ նիստ

2025թ. դեկտեմբերի 17-ին տեղի ունեցավ Հաշվապահների և աուդիտորների եվրասիական խմբի (ՀԱԵԽ) հերթական նիստը: Նիստը նախագահում էր Պալատի խորհդի անդամ, ՀԱԵԽ նախագահ Թաթուլ Մովսիսյանը: Նիստի ընթացքում քննարկվեց ՀԱԵԽ որակի հսկողության հանձնաժողովի 2025թ. տարեկան գործունեության հաշվետվությունը, հանձնաժողովների 2025թ. տարեկան գործունեության հաշվետվությունների և 2026թ. աշխատանքային ծրագրերի ներկայացման ժամանակացույցը: Հաստատվեց ՀԱԵԽ կրթության հանձնաժողովի անհատական կազմի փոփոխության վերաբերյալ որոշումը, ինչպես նաև ներկայացվեց տեղեկատվություն ՀՄԴ տարեկան ընդհանուր ժողովի վերաբերյալ:

ՀԱԵԽ-ի ընդհանուր ժողովին մասնակցում էր նաև Պալատի գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը: ՀԱԵԽ-ի անդամ են հանդիսանում ԱՊՀ երկրների 10 մասնագիտացված (պրոֆեսիոնալ) կառույցները:



ԵԱՏՄ աուդիտորների Խորհրդատվական մարմնի նախագահության նիստ

2025թ. դեկտեմբերի 18-ին տեղի ունեցավ Եվրասիական տնտեսական միության աուդիտորների Խորհրդատվական մարմնի նախագահության նիստը:

Օրակարգում ԵԱՏՄ հանձնաժողովների 2025-2026 թվականների աշխատանքային ծրագրերի նախագծերի քննարկումն էր, որի վերաբերյալ ելույթով հանդես եկան հանձնաժողովների ներկայացուցիչները, ինչպես նաև քննարկվեցին այլ ընթացիկ հարցեր: Քննարկված հարցերի վերաբերյալ կայացվեցին համապատասխան որոշումներ:

Նիստին մասնակցում էին ՀԱԵԽ նախագահ, Պալատի խորհրդի անդամ Թաթուլ Մովսիսյանը, Պալատի նախագահի տեղակալ, Որակավորման հանձնաժողովի նախագահ Արթուր Հարությունյանը և Պալատի գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը:

ԵԱՏՄ ԱԽՄ անդամ են հանդիսանում ԵԱՏՄ բոլոր երկրների (Ռուսաստան, Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղստան) մասնագիտացված կառույցները:



Համագործակցության շնորհակալագիր

Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախագահի տեղակալ Արթուր Հարությունյանը և գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը մասնակցել են Հայաստանում անցկացված Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (ACCA) նոր անդամների վկայականների հանձնման միջոցառմանը:

Պալատը վերահաստատել է իր հանձնառությունը՝ շարունակելու և խորացնելու համագործակցությունը ACCA-ի հետ՝ որակավորման ծրագրի զարգացման և Հաշվապահների միջազգային դաշնության (IFAC) լիիրավ անդամության գործընթացներում:

Միջոցառման ընթացքում Պալատին հանձնվել է համագործակցության շնորհակալագիր: